



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԵՏԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Ս.Ը.Մ.Ի ԿԵԴՐ.
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

32րդ Նաւասարդեան Խաղերու փակման հանդիսութեանց Ներկայ ըլլալու համար Լու Անձելըս իր գտնուելուն առիթով, Հ.Ս.Ը.Մ.Ի Կեդրունական Վարչութեան ատենապետ Տիար Գառնիկ Մկրտիչեան Չորեքշաբթի, 11 Յուլիսի կեսօրին, այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Տիար Գառնիկ Մկրտիչեանի կ'ընկերանար բազմավաստակ Հ.Ս.Ը.Մ.ական Տիար Գօօծ Պալեան, որ անդամ է Ազգ. Առաջնորդարանի շենքի յանձնախումբին: Քանդիպումին Ներկայ Եղաւ Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պղտիկեան:

Նկատի ունենալով, որ Տիար Գ. Մկրտիչեան առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շենքը, Առաջնորդ Մրբազանն ու հիւրընկալ ժողովականները ծանօթութիւններ տուին շենքի տարբեր բաժանմունքներուն, ինչպէս նաև ընթացիկ ու ապագայ ծրագիրներու մասին: Տիար Գ. Մկրտիչեան շնորհաւորեց Առաջնորդ Մրբազանն ու մեր Թեմը՝ այս պատմական իրագործումին համար, ապա, իր կարգին որոշ տեղեկութիւններ հաղորդեց յատկապես Հ.Ս.Ը.Մ.Ի աշխատանքերուն ու ընդհանրապես Լիբանանի վիճակին մասին:



PRELATE WELCOMED HOMENETMEN CENTRAL EXECUTIVE CHAIR MR. KARNIG MGRDICHIAN



On the afternoon of Wednesday, July 11, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Chair of the Homenetmen Central Executive Mr. Karnig Mgrdichian to the Prelacy. Mr. Mgrdichian, who was in Los Angeles to participate in the closing ceremonies of the 32nd Navasartian Games, was accompanied by longtime Homenetmen member and member of the Prelacy Building Committee Mr. Koko Balian. Prelacy Executive Council Treasurer Mr. Vahan Bezdkian also participated in the meeting.

Given that it was Mr. Mgrdichian's first visit to the new Prelacy headquarters, the Prelate and representatives informed him of the various departments of which the Prelacy is comprised and also of future activities. Mr.

Mgrdichian in turn imparted details of the future plans of Homenetmen and its current state of affairs in Lebanon.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՄԱՂԹԵ ՀՕՄԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՅ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ 87ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՐՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Յայ Օգևութեան Միութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու 87-րդ Շրջանային Պատգամաւորական ժողովը բացուեցաւ Քիսզշաբթի, Յուլիս 12-ի կեսօրին, Ըրվայի «Մարիոթ» պանդրկին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազն Յօր, Գերաք. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան Ներկայ Եղաւ բացման հանդիսութեան եւ ընթերցեց Առաջնորդ Սրբազն Յօր օրինութեան խօսքը:

Առաջնորդ Սրբազնը կ'ողջուներ պատգամաւորական ժողովին մասնակցիներն ու բոլոր նույրեալ ՀՕՄականները, որոնք գործած են ու կը շարունակեն գործել մեր ժողովուրոին հետ ազնիւ գործակցութեամբ, իրենց ծառայութիւնները հաւասարապէս բաշխելով այս շրջանի հայութեան, ինչպէս նաեւ Յայաստանին, Արցախին, Զաւախիքին ու հայութեան բոլոր օճախներուն: Առաջնորդ Սրբազնը յաջողութիւն եւ կորով մաղթեց պատգամաւորական ժողովին ու ՀՕՄական բոլոր աշխատանքներուն:

PRELATE WISHES SUCCESS TO THE ANNUAL ASSEMBLY OF THE ARMENIAN RELIEF SOCIETY

On the afternoon of Thursday July 12, the 87th annual assembly of the Armenian Relief Society convened at the Marriott Hotel in Irvine. Very Rev. Fr. Muron Aznikian attended the opening ceremony of the assembly on behalf of H.E. Archbishop Moushegh Mardirossian and delivered the Prelate's message.

At the start of his remarks the Prelate welcomed the participants to the annual assembly and acknowledged their devotion and tireless service to the Armenian people in Diaspora, as well as in Armenia, Artsakh, Javakhk, and elsewhere. The Prelate concluded by wishing the participants success in their proceedings and in all their future endeavors.